

Հեծանիվը

հեղինակ՝ Ճաբուա Ամիրեջիբի

թարգմանիչ՝ Մաղլավա Գեուրկովա

Ամառային արձակուրդներին ընդամենը մի քանի օր էր մնացել:

Հայրս արագ քայլելու սովորություն ուներ: Ես մշտապես ետ էի մնում, առավել եւս այն ժամանակ, երբ ուշադրությունս որեւէ հետաքրքիր բան էր գրավում:

Ինչոր տեղ էինք գնում, իմ ուշադրությունը գրավեց հեծանիվը եւ նրա վրա նստած տղան: Հեծանիվը նիկելապատ դեկ ուներ, ցոլալապտերիկ, հետեւում՝ նստելատեղ եւ պահոց: Տղան կարմիր այտեր էւ ինքնագոհ, զվարթ հայացք ուներ:

Նա մեր կողքով անցավ եւ զանգը ծնգծնգացրեց, զանգի այս ձայնը սրտիս կպավ, կանգնել նայում էի ոչ այն է՝ տխուր, ոչ էլ ուրախությամբ:

Չգիտեմ, թե ինչքան կկանգնեի այնտեղ, եթե չլսեի հայրիկիս կանչը:

Վազելով նրան հասա:

— Այդ ինչի՞ն էիր նայում, — հարցրեց հայրս:

— Այն տղան հեծանիվ ունի:

— Դո՞ւ էլ ես հեծանիվ ուզում:

— Ուզում եմ, — պատասխանեցի ես:

— Շա՞տ ես ուզում:

Որոշ ժամանակ մտածեցի, թե ինչպե՞ս հասկացնեմ, որ իրոք շատ եմ ուզում, ոչ թե հենց այնպես.

— Շատ եմ ուզում, — ասացի հաստատուն ձայնով:

— Եթե իսկապես շատ ես ուզում, ուրեմն՝ կունենաս, — պատասխանեց հայրիկս:

Ոչինչ չհասկացա, բացի այն, որ հայրիկը նույն պահին ինչոր բան որոշեց:

Մերոնց ուղարկեցինք հանգստանալու:

Հաջորդ օրը հայրիկս շուտ արթնացավ, միասին դուրս եկանք տնից, չգիտեի, թե ուր ենք գնում եւ երբ հարցրի՝ պատասխանեց.

— Կաշխատես, փող կստանաս եւ հեծանից կգնես:

Զարմացա եւ հարցրի հայրիկիս.

— Դու ի՞նչ ե, հեծանիցի փող չունե՞ս:

— Ունեմ, — պատասխանեց: — Դո՛ւ չունես, կաշխատես, կունենաս. . .

Այսպես գրուցելով մոտեցանք այն հիմնարկին, որտեղ ես, հայրիկիս որոշմամբ, հեծանիվի փող պիտի աշխատեի: Արտադրամասն անցանք եւ ապակեպատ պատշգամբով փակված մի սենյակ մտանք, շուրջբոլորը ժանգի հոտ էր, երկաթի կտորներ եւ ինչոր մասեր էին շարված այն մարդու սեղանին ում մոտ ինձ տարավ:

— Բարեւ, Միշո՛ւ, քեզ համար բանվոր դասակարգ եմ բերել, — ասաց հայրս:

Վարպետ Միշոն վեր կացավ, ձեռքով բարեւեց, թեւիցս բռնեց եւ կարգին գննեց ինձ, անգամ թափահարեց ուսերիցս բռնած: Այնպես էր նայում, կարծես թե ինչոր մեկի հետ մրցելու պիտի տաներ ինձ, կասկածում էր՝ կհաղթե՞մ, թե՛ ոչ: Վարպետ Միշոն թխադեմ մարդ էր, ուժեղ, խալաթի գրպանից բավական հին կարկին էր երեւում:

Երբ վերջացրեց ինձ գննելը, ասաց.

— Գնա ամենավերջին արտադրամասը, այնտեղ Սերգեյ Միխայլովիչն է, ծեր մարդ է, փականագործ, ասա թող այստեղ գա:

Դուրս եկա, համարյա ոտքերի թաթերի վրա անցա առաջին արտադրամասը: Ինձ թվում էր, բոլորն ինձ էին նայում եւ բոլորին խանգարում էի, բայց ո՞ւմ դարդն էր կտրել, ամեն մեկն իր գործով էր զբաղված: Արտադրամասում աղմուկ էր, հաստոցները ճռճում էին, թիթեղյա թերթերը շրմփալով ընկնում էին, ամեն ինչ պտտվում ու շարժվում էր:

Գտա ծեր փականագործին, միասին գնացինք վարպետ Միշոյի մոտ եւ տասը րոպե հետո արդեն կապել էի հսկայական գոգնոցը, բրեզենտե ձեռնոցներ էի հագել եւ ջոկում էի թիթեղի կտորները: Սերգեյ Միխայլովիչի տված ձեւաձողի վրա տեղավորում էի թիթեղի կտորը, կավիճով եզրագծում եւ կողքի դնում: Սա էր իմ աշխատանքը: Ցերեկվա ժամը երկուսին արդեն տուն էի գնում, ես դեռ անչափահաս էի եւ իմ աշխատանքային օրը կարճ էր:

Հունիսի տասնիննին առաջին անգամ եւ էլ իմ ազգանվան դիմաց աշխատավարձի ցուցակում ստորագրեցի եւ ստացա քսանինը ռուբլի, ափիս մեջ սեղմեցի, ձեռքս դրի գրպանս եւ վազեցի հայրիկիս մոտ՝ աշխատանքի վայրը, թե չէ ոնց պիտի համբերեի մինչեւ գործից տուն գար:

— Պահի՛ր, չծախսես, — ասաց հայրիկս:

Պահեցի, չծախսեցի ոչ մի կոպեկ, ընթրիքի եւ կինոյի փողը հայրս էր տալիս:

Հունիսին, լավ եմ հիշում, ընդհանուր հաշվով ստացա երեք հարյուր տասնչորս ռուբլի, հուլիսին ուրիշ աշխատանքի տեղափոխվեցի:

Հնարավոր չէր, որ ամեն օր չբացեի դարակը, երեքչորս օրը մեկ հաշվում էի փողերս: Չեմ կարող ասել, թե ինձ հաճույք էր պաճառում փող հաշվելը, բայց պահանջ էի զգում, որ ստուգեի՝ տեղո՞ւմ են փողերս, թե՛ ոչ:

Ո՞վ պետք է տաներ:

Օգոստոսի մեկին հիմնարկը վերջնահաշվարկ կատարեց, ազատվեցի աշխատանքից:

Ես ունեի սեփական քրտինքով հեծանից գնելու համար վաստակած 720 ռուբլի գումար՝ սեղանի դարակում դրված, դարակը փակել էի, բանալին գրպանումս էր, եւ գնացքը ինձ ու հայրիկիս դեպի հանգստյան տուն էր տանում:

Ամբողջ օգոստոս ամիսը հոգով տանջվում էի, համբերությունս այլեւս չէր բավականացնում, թե երբ է սկսվելու ուսումնական տարին, որ գնանք խանութ եւ գնենք նիկելապատ դելով, լապտերիկով, պահոցով հեծանիվը: Բոլորը գիտեին, որ ես փող ունեի, որը վաստակել էի սեփական աշխատանքով, այն էլ՝ 720 ռուբլի եւ այս գումարով կառնեի հեծանիվը:

Վերջապես վերադարձանք հանգստյան տնից, սկսվեցին դասերը, եւ ես նույն օրը պիտի վազեի խանութ՝ հեծանիվ գնելու:

Դպրոցից վազելով տուն եկա, զցեցի պայուսակս, բացեցի դարակս, հաշվեցի գումարը, դրի գրպանս: Արդեն ուզում էի գնալ հեծանից գնելու, երբ նկատեցի, որ իմ քույրիկ Քեթինոն իր շորերը, գուլպաները եւ կոշիկները արագարագ դասավորու էր ճամպրուկի մեջ եւ կամաց, անձայն լաց լինում, արցունքներն իրար հետեւից թափվում էին. . .

Մոտեցա, դեմքին նայեցի:

Լացում էր, իսկապես լացում էր:

— Ինչո՞ւ եւ լացում, Քեթինո, — հարցրի եւ եւ անմիջապէս մտածեցի, որ նրա լացի եւ ճամպրուկի հավաքելու մեջ անպայման կապ կար, գիշերը հայրիկը մայրիկին ինչոր բան էր ասում:

— Այն տղան մի կիսամաշ տաբատից եւ ուսանողական տոմսից բացի ոչինչ չունի, վերջացնէ՛ն, ոտքի կանգնեն եւ հետո, ինչ կուզեն, թող անեն, թեկուզ երեք անգամ պսակվեն:

Այն տղայի անունը Գիզլա էր, երբեք չէի տեսել նրան կիսամաշ տաբատով, ջրագնդակի խմբակ էր հաճախում:

Վա՛խ, այդ ինչպե՛ս էր խաղում:

Ես շատ էի ուզում, որ Գիզան եւ Քեթինոն . . .

— Աչիկո, ցավդ տանեմ, եղբայրս, դու արդեն մեծ տղա եւ եւ երեւի ինձ կհասկանաս, եւ տնից գնում եմ Գիզայի մոտ, էլ չեմ կարող . . ., — Քեթինոն լացեց, եւ եւ էլ սկսեցի լացել, չնայած մինչեւ հիմա չեմ հասկանում, թե ի՞նչը չէր կարող Քեթինոն:

Քեթինոն ճամպրուկը արագ վերցրեց, ինձ համբուրեց, սրբեց արցունքները, տխուր ու սրտաճմլիկ նայեց այս ու այն կողմ եւ գնաց:

Ես հետեւից գնում էի եւ լացում, սիրտս էլ չդիմացավ, իրեն հասա եւ հարցրի. — Քեթինո, Գիզլան կիսամաշ տաբատից եւ ուսանողական տոմսից բացի ոչինչ չունի, ինչո՞վ պիտի ապրեք:

Քեթինոն մտածեց եւ պատասխանեց.

— Մենք աղքատությունից չենք վախենում, սիրում ենք միմյանց:

Ես հանեցի 720 ռուբլին եւ Քեթինոյի վերնագգեստի գրպանը խցկեցի:

— Ո՛չ, չեմ ուզում, Աչիկո, հետ վերցրու, — անհանգստացավ Քեթինոն եւ ինձ մեկնեց փողը:

— Չեմ վերցնի, ձեզ պետք կգա, — ասացի եւ եւ մի քանի քայլ ետ քաշվեցի:

Քեթինոն նորից լացեց. . . միայն թե այս անգամ հետն էլ ժպտում էր, հետո գումարին նայեց, դրեց գրպանըն ու ասաց.

— Շնորհակալություն, Աչիկո, այս պարտքդ մենք երբեք չենք մոռանա, մենք անպայման քեզ համար հեծանից կգնենք:

Քեթինոն գնաց:

Երեկոյան հայրիկս այնպիսի իրարանցում սարքեց, որ մինչ այդ ոչ մեր ընտանիքում, ոչ էլ հարեւանների տանը չէի տեսել:

Ինչ խոսք, պարզվեց, 720 ռուբլու պատմությունն էր, եւ ճիշտն ասած, ուզածի չափ դնգստեցին: Քեթոյի եւ Գիգլայի փոխարեն ես մի լավ ծեծ կերա:

Հայրիկս հայտարարեց, որ Քեթինոն մեր ընտանիքում այլեւս ոտք չի դնի . . . մայրիկն էլ նույն կարծիքին էր:

Մոտավորապէս երկուերեք ամիս անց մի հետաքրքիր, հաճելի բան լսեցի:

Հայրիկը ննջասենյակում մայրիկին ասաց.

— Մեր տղան լա՛վն է մեծանում, ինչպե՛ս է տվել իր փողերը այն հիմար աղջկան: Ես պէտք է իր համար հեծանիվ գնեմ . . . իսկ այն աղջկա ոտքը . . . Տեսնել չեմ ուզում . . .

Գիգլան եւ Քեթինոն զույգ տղա ունեցան, հայրիկն էր նրանց զբոսանքի տանում, բարեկամների եւ բոլորի մոտ պարծենում էր, թե գայլերի նման թռռներ ունի:

Իսկ ինձ համար ոչ ոք հեծանիվ չգնեց: